ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010. ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
Ֆաքս +374 060 62 17 31
www.mud.am
E-mail:info@mud.am

26.07.13թ. N 04/13.1/4676-13

Ձեր N ---------- առ ----------

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
ք.Երևան Բյուզանդի փողոց 1/3, 4-րդ հարկ
Գևորգ Հայրապետյանին

ՀՀ վարչապետի 2013 թվականի հուլիսի 10-ի
N02/24.3/9918-13 հանձնարարական

Հարգելի պարոն Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված Ձեր 2013 թվականի հունիսի 26-ի N202-ի N6 գրությամբ բարձրացված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատին համայնքի բնակիչ Անահիտ Աբգարյանի ընտանիքի բնակապահովման խնդրի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հարցի կապակցությամբ հայտնում եմ.

ՀՀ 2013 պետական բյուջեով հանրապետության բնակավայրերի քարաթափերի ազդեցության և սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների վերաբնակեցման՝ բնակարանային խնդիրների լուծման համար միջոցներ չեն նախատեսվել:

Հարկ է նշել, որ քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված (այդ թվում քարաթափերի ազդեցության գոտիներում գտնվող) բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հարցը կարգավորվել է ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N9 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգով:

Ընդ որում, հայեցակարգի կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցի համաձայն՝ ներկայումս մշակման փուլում է գտնվում քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման

պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը, որով կհստակեցվեն քանդման ենթակա վթարային, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթությունները և ժամկետները:

Ելնելով վերը շարադրվածից հայտնում եմ, որ Ա.Աբգարյանի բնակարանային պայմանների բարելավման հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ վերը նշված ծրագրի ընդունումից հետո:

Հարգանքով

Ռ.Ալավերդյան

Ե.Աթայան
(060) 621-719